ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Լսվել է ԱԿՀ բաժնի թիվ 5 նիստում (23 դեկտեմբերի 2020 թ.)
և երաշխավորվել է ներկայացնելու Գիտական խորհրդին

Արտաքին կապերի և համագործակցության բաժնի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019-2020 ուստարի

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019-2020 թթ. ընթացքում արտաքին կապերին և համագործակցությանն առնչվող հիմնական գործողություններն իրականացվել են՝ հիմք ընդունելով ԳՊՀ արտաքին կապերի և համագործակցության (ԱԿՀ) բաժնի 2019-2020 գործողությունների ծրագիրը, որը մշակվել է բուհի 2019-2023թթ. ռազմավարական զարգացման ծրագրին համապատասխան: Ըստ այդ ծրագրի՝ արտաքին կապերի և համագործակցության բաժնի գերակա ուղղություններն են եղել՝

- բուհի ռազմավարական խնդիրներից բխող գործընկերային կապերի հաստատումը, նոր պայմանագրերի ու համաձայնագրերի կնքումը,
- բուհի ներքին շահակիցների համար կարճաժամկետ դասընթացների, հանդիպումների կազմակերպումը և մասնակցությունը գործընկեր հաստատություններում կազմակերպված միջոցառումներին,
- դասախոսների և ուսանողների շարժունության խթանումը և կարողությունների զարգացմանը միտված ծրագրերի նախագծումն ու իրականացումը,
- ԳՊՀ պաշտոնական կայքէջում օտարալեզու տեղեկատվության ծավալի մեծացմանն ուղղված միջոցառումները,
- ԳՊՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման համար արտաքին կապերին և համագործակցությանն առնչվող անհրաժեշտ նյութերի պատրաստումը և թարգմանությունը:

Բուհի ռազմավարական խնդիրներից բխող գործընկերային կապերի հաստատում և նոր պայմանագրերի ու համաձայնագրերի կնքում: Բուհը հաշվետու ժամանակահատվածում ընդլայնել է համագործակցության աշխարհագրությունը՝ հաստատելով գործընկերային նոր հարաբերություններ հետևյալ համալսարանների ու կազմակերպությունների հետ.

1. 2019 թ. հոկտեմբերին համագործակցության համաձայնագիր է ստորագրվել ԳՊՀ-ի և «Դասավանդի՛ր, Հայաստա՛ն» կրթական հիմնադրամի միջև՝ համակարգելու հիմնադրամի ու համալսարանի միջև համագործակցությունը երիտասարդ մասնագետների հավաքագրման և նրանց ուսումնառության կազմակերպման առումով: Համագործակցության շրջանակում ԳՊՀ-ում կազմակերպվել են ծրագրի վերաբերյալ տեղեկատվական հանդիպումներ և վերապատրաստման դասընթացներ: Հիմնադրամի պատվերով այժմ ԳՊՀ-ում մեկ ուսանող կրթության հատուկ պայմաններով մագիստրոսական կրթություն է ստանում:
2. 2019 թ. նոյեմբերին փոխըմբռնման հուշագիր է կնքվել ԳՊՀ-ի և Ջինիշյան հիշատակի հիմնադրամի (ՋՀՀ) միջև՝ շարունակելու երկկողմ փոխըմբռնումը «Քաղաքացիական երկխոսություն և գործնական քայլեր փոփոխության համար 2019-2020թթ.» (ՔԵԳՔ) ծրագրի իրականացման շրջանակներում, որի նպատակը ԳՊՀ ուսանողների հասարակական ակտիվության ու իրազեկվածության բարձրացումն է: Համագործակցության արդյունքում ընդլայնվել է ուսանողների քաղաքացիական մասնակցությունը: Կազմակերպվել են քաղաքացիական թեմաներով հանդիպում-սեմինարներ՝ ուսանողների շրջանում ծավալելով քննարկումներ և տրամադրելով նրանց համապատասխան հնարավորություններ՝ մատնանշելու գլխավոր խնդիրները: Հմտությունների զարգացման համար իրականացվել է թրեյնինգ: Ուսանողների գաղափարները կյանքի կոչելու, խնդիրները լուծելու և փորձնական գիտելիքներ ձեռք բերելու հնարավորության ընձեռման համար ծրագիրը դրամաշնորհ է տրամադրել երիտասարդների մշակած «Ակադեմիական ինքնավարությունը որակյալ կրթության գրավական» նախագիծ-առաջարկին՝ ծրագրի իրականացման գործընթացը վերահսկելով տեղի համակարգողի միջոցով: Տարեկան աշխատանքներն ամփոփվել են միջհամալսարանական ուսանողական գագաթնաժողովում, որին մասնակցել են նաև ԳՊՀ ուսանողները:
3. 2019 թ. դեկտեմբերի 2-ին համագործակցության հուշագիր է կնքվել Շիրակի պետական համալսարանի հետ՝ հիմք ընդունելով միջբուհական համագործակցության, գիտատեխնիկական և կադրային կարողությունների լիարժեք օգտագործման և առաջավոր փորձի փոխանակման անհրաժեշտությունը:

4. 2020 թ. հունվարի 23-ին ԳՊՀ-ի և Արցախի պետական համալսարանի միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր, որը ենթադրում է սովորողների և պրոֆեսորադասախոսական կազմի ակադեմիական շարժունության, կրթական ծրագրերի, դասընթացների համատեղ մշակում, սովորողների և դասախոսների մասնագիտական վերապատրաստում, ուսանողների գիտահետազոտական, գիտամանկավարժական, ուսումնական արտադրական պրակտիկաների փոխադարձ կազմակերպում, համատեղ գիտաժողովների իրականացում և այլն: Պետք է նշել, որ ԳՊՀ-ն ԱրՊՀ-ի հետ համագործակցել է սկսած 2017-2018 ուս. տարվանից: Մասնավորապես՝ երկու համալսարանների օտար լեզուների ամբիոնները իրականացնում են բենչմարքինգ («Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի ու դասընթացների վերանայում և բարելավում, մասնագիտական առարկաների դասավանդման նպատակով ԱրՊՀ-ից դասախոսների հրավիրում, ուսանողների ներքին շարժունության իրականացում):

5. 2020 թ. հունվարի 29-ին ԳՊՀ-ի և ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտի միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր՝ հիմք ընդունելով միջբուհական համագործակցության ամրապնդման, կողմերի գիտատեխնիկական և կադրային կարողությունների լիարժեք օգտագործման և առաջավոր փորձի փոխանակման անհրաժեշտությունը:

6. 2020 թ. հունվարի 29-ին ԳՊՀ-ի և ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր կրթության և գիտության ոլորտում համատեղ փոխշահավետ ծրագրեր մշակելու և իրականացնելու նպատակով:

7. 2020 թ. հունվարի 29-ին ԳՊՀ-ի և Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր կրթական և գիտահետազոտական ոլորտներում գործընկերային հարաբերությունների հաստատման համար: Հուշագրի նպատակը երկու բուհերի միջև կրթական ու գիտահետազոտական ոլոտներում գործընկերային հարաբերությունների ամրագրումն է: ԳՊՀ-ն ՃՇՀԱՀ-ի հետ համագործակցել է HERITAG ծրագրի շրջանակներում («Զբոսաշրջության կառավարում» ՄԿԾ-ի ուսումնական պլանի և նոր դասընթացների (Երկրատեղեկատվական համակարգերի հիմունքներ, տվյալների հավաքագրում և քարտեզագրում, նախագծի կառավարում) մշակում):

8. 2020 թ. փետրվարի 7-ին ԳՊՀ-ի և ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր գիտահետազոտական և կրթական ոլորտներում գործընկերային հարաբերությունների հաստատման, հուշագրով նախատեսված ուղղություններով համագործակցության ծրագրերի իրականացման նպատակով:

9. 2020 թ. փետրվարի 14-ին ԳՊՀ-ի և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի միջև կնքվել է համագործակցության հուշագիր ՀՊՏՀ-ում և ԳՊՀ-ում իրականացվող կրթական, միջազգային դրամաշնորհային ծրագրերի մասին տեղեկությունների տրամադրման, համատեղ կամ կրկնակի աստիճանաշնորհման կրթական ծրագրերի իրականացմանն ուղղված աշխատանքների քննարկման և կազմակերպման, առարկայական, կրթական ծրագրերի արտաքին փորձագիտական գնահատման աշխատանքների, օրենսդրությանը համապատասխան սովորողների և պրոֆեսորադասախոսական կազմի անդամների ակադեմիական շարժունության, սովորողներին դասախոսների մասնագիտական վերապատրաստումների վարպետության դասերի, կլոր սեղանների, թեմատիկ բանավեճերի, համատեղ գիտահետազոտական ծրագրերի իրականացման և գիտակրթական այլ ուղղություններով համագործակցելու համար:

10. 2020 թ. փետրվարի 19-ին ԳՊՀ-ի և ՀՀ ԳԱԱ Ա. Բ. Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտի միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր ՀՀ ԳԱԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտում և ԳՊՀ–ում համատեղ գիտական և կրթական ծրագրերին ուղղված աշխատանքների քննարկման և կազմակերպման, հանրապետական և միջազգային գիտաժողովների, գիտահետազոտական, կրթական ուղղվածության դրամաշնորհային ծրագրերի իրականացման, հետազոտությունների արդյունքների հրատարակման, գիտական և գիտակրթական ծրագրերի արտաքին փորձագիտական գնահատման աշխատանքների կատարման, սովորողների և դասախոսների մասնագիտական վերապատրաստումների, վարպետության դասերի, կլոր սեղանների, թեմատիկ բանավեճերի կազմակերպման և այլ ուղղություններով համագործակցելու նպատակով:

11. 2020 թ. փետրվարի 22-ին ԳՊՀ-ի և Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի միջև կնքվել է համագործակցության հուշագիր ՀԱՊՀ-ում և ԳՊՀ-ում իրականացվող կրթական, միջազգային ծրագրերի մասին տեղեկությունների տրամադրման, համատեղ ծրագրերի իրականացմանն ուղղված աշխատանքների քննարկման և կազմակերպման, առարկայական, կրթական ծրագրերի արտաքին փորձագիտական գնահատման, սովորողների և պրոֆեսորադասախոսական կազմի անդամների ակադեմիական շարժունության իրականացման, կրթական ծրագրերի և/կամ առանձին դասընթացների համատեղ մշակման, գիտահետազոտական ծրագրերի իրականացման, ուսանողների գիտահետազոտական, գիտամանկավարժական, ուսումնական արտադրական պրակտիկաների փոխադարձ կազմակերպման և այլ ուղություններով գործակցելու համար:

Բուհի ներքին շահակիցների համար կարճաժամկետ դասընթացների, հանդիպումների կազմակերպում և մասնակցություն գործընկեր հաստատություններում կազմակերպված միջոցառումներին: ԳՊՀ գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացման համար շեշտադրվել են ներքին շահակիցների համար կարճաժամկետ դասընթացների կազմակերպման կարևորությունը և բաժնի աշխատակիցների մասնակցությունը գործընկերների կողմից կազմակերպված միջոցառումներին: Ստորև ներկայացված են 2019-2020 թթ. ընթացքում իրականացված դասընթացները և բաժնի աշխատակիցների մասնակցությամբ տեղի ունեցած միջոցառումները:

1. 2019 թ. սեպտեմբերի 26-ից–27-ը «Բեսթ Վեսթերն Աղվերան» հյուրանոցում ԱՄՆ Խաղաղության կորպուսի կամավորների և նրանց գործընկերների համար կազմակերպվել էր երկօրյա կոնֆերանս՝ «Ծրագրի նախագծում և կառավարում» թեմայով: ԳՊՀ արտաքին կապերի և համագործակցության բաժնի ղեկավար Նաիրա Սաֆարյանը և ԽԿ կամավոր Ռոբերտ Ուինսթոն Փոզգեյթը մասնակցել են վերոնշյալ միջոցառմանը:

2. «Էրազմուս+ տեղեկատվական օրեր» միջոցառում- 2019 թ. նոյեմբերի 7-ին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում և նոյեմբերի 8-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Ալեք Մանուկյան մասնաշենքում տեղի ունեցած «Էրազմուս+ տեղեկատվական օրեր» միջոցառմանը ԳՊՀ-ից մասնակցել է ԱԿՀ բաժնի ղեկավար Ն.Սաֆարյանը:

3. Առաջնորդության զարգացման երկամյա ծրագրի վերաբերյալ իրազեկող հանդիպում- 2019 թ. նոյեմբերի 20-ին ԳՊՀ-ում «Դասավանդի՛ր, Հայաստա՛ն» ծրագրի հավաքագրման թիմի համակարգող Անժելա Ավագյանը և ծրագրի հավաքագրման մասնագետ Հրանուշ Վանեսյանը ուսանողների հետ հանդիպմանը ներկայացրել են **Առաջնորդության զարգացման** երկամյա ծրագիրը, ծրագրի ընձեռած հնարավորությունները, դիմելու կարգն ու հետագա անելիքները:

4. «Ինչպես գրել հետազոտական աշխատանք» թեմայով դասընթաց- 2019 թ. նոյեմբերի 21-ին ԳՊՀ-ի օտար լեզուների ամբիոնի ու արտաքին կապերի և համագործակցության բաժնի նախաձեռնությամբ «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության երեք կուրսերի ուսանողների համար անցկացվել է «Ինչպես գրել հետազոտական աշխատանք» թեմայով դասընթաց, որի նպատակն էր ուսանողների շրջանում ձևավորել և զարգացնել գիտահետազոտական աշխատանք կատարելու հմտությունները, օգտակար լինել կուրսային, ավարտական աշխատանքներ, գիտական հոդվածներ գրելու ընթացքում՝ ծանոթացնելով նրանց գիտական աշխատանքի տարատեսակներին, դրանց ձևավորման հիմնադրույթներին և մեթոդներին, հղումներ անելու կարգին: Դասընթացավարը ԳՊՀ արտաքին կապերի և համագործակցության բաժնի մասնագետ Ս.Ալավերդյանն էր:

5. «Համալսարաններում միջազգայնացման խթանումը՝ անձնակազմի շարժունության միջոցով» թեմայով դասընթաց- 2019 թ. նոյեմբերի 25-26-ը Հայաստանի ամերիկյան համալսարանում և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում անցկացված «Համալսարաններում միջազգայնացման խթանումը՝ անձնակազմի շարժունության միջոցով» տարածաշրջանային սեմինարին (Հայաստանի, Վրաստանի, Մոլդովայի, Ուկրաինայի Էրազմուս+ բարձրագույն կրթության բարեփոխումների փորձագետների մասնակցությամբ) ԳՊՀ-ից մասնակցել է ԱԿՀ բաժնի մասնագետ Ս.Ալավերդյանը, որը ձեռք է բերել նոր հմտություններ՝ ուղղված համալսարանի միջազգայանացմանն և շարժունությանը:

6. «Օտարերկրյա որակավորումների ճանաչման արդի հիմնախնդիրներ և պրակտիկա» թեմայով դասընթաց- 2019 թ. դեկտեմբերի 20-ին Երևանի «Էրեբունի պլազա» բիզնես կենտրոնում տեղի ունեցած «Օտարերկրյա որակավորումների ճանաչման արդի հիմնախնդիրներ և պրակտիկա» դասընթացին՝ կազմակերպված ՀՀ ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնի (ENICArmenia) կողմից, ԳՊՀ-ից մասնակցել են ԱԿՀ բաժնի մասնագետ Ս.Ալավերդյանը և Պատմության ու իրավագիտության ամբիոնի դասախոս Ն.Ալավերդյանը: Դասընթացի նպատակն էր մասնակիցներին ներկայացնել օտարերկրյա որակավորումների ճանաչման արդի հիմնախնդիրները, ճանաչման հիմնական սկզբունքները՝ հիմնված միջազգային և ՀՀ բուհերի փորձի վրա:

7. «Բուհական ինքնավարություն. տարբեր երկրների առաջավոր փորձի հիման վրա համեմատական քննություն» թեմայով դասընթաց- 2020 թ. հունվարի 18-ին ԳՊՀ-ի և ՋՀՀ ՔԵԳՔ ծրագրի համագործակցության շրջանակում Գորիսի պետական համալսարանում ուսանողների մասնակցությամբ անցկացվել է «Բուհական ինքնավարություն. տարբեր երկրների առաջավոր փորձի հիման վրա համեմատական քննություն» դասընթացը, որը վարել է Էրազմուս+ բարձրագույն կրթության բարեփոխումների փորձագետ, կրթության հետազոտող Միշա Թադևոսյանը: Դասընթացի ընթացքում անդրադարձ է արվել բուհական ինքնավարության էությանը, բաղադրիչներին և առանձնահատկություններին:

8. «Բազմաֆունկցիոնալ հասարակական տարածքներ» թեմայով դասընթաց - 2020 թ. փետրվարի 21-ին ԳՊՀ-ի և ՋՀՀ ՔԵԳՔ ծրագրի համագործակցության շրջանակում Գորիսի պետական համալսարանում ուսանողների և դասախոսների մասնակցությամբ տեղի է ունեցել «Բազմաֆունկցիոնալ հասարակական տարածքներ» դասընթացը, որը վարել է «Գրադարակ գրադարաններ» ՀԿ-ի համահիմնադիր Արուսյակ Զեյնալյանը: Դասընթացի ընթացքում քննվել են հետևյալ հարցերը. ա) Ի՞նչ է հասարակականը: Ի՞նչ է բազմաֆունկցիոնալը: Ո՞րն է մատչելի տարածքը: Ի՞նչ տարբերակներ կան: Ինչպե՞ս հասնել այնտեղ: Ինչո՞ւ հասնել, բ) Աշխարհի և հայաստանյան լավագույն փորձերը:

9. «Ակադեմիական ինքնավարության հետազոտման համար արդյունավետ մեթոդներ» թեմայով դասընթաց- ՋՀՀ-ի ֆինանսավորմամբ և ԳՊՀ ուսանողների մասնակցությամբ իրականացվող «Ակադեմիական ինքնավարությունը որակյալ կրթության գրավական» ծրագրի շրջանակներում 2020 թ. ապրիլի 6-ին և 8-ին Zoom հարթակում տեղի է ունեցել «Ակադեմիական ինքնավարության հետազոտման համար արդյունավետ մեթոդներ» թեմայով երկօրյա դասընթացը, որը վարում էր Էրազմուս+ բարձրագույն կրթության բարեփոխումների փորձագետ, կրթության հետազոտող Միշա Թադևոսյանը:

10. «Երիտասարդությունը հանուն հակակոռուպցիայի» խորագրով կրթական նախագիծ. տեղեկատվական առցանց հանդիպում- 2020 թ. հուլիսի 2-ին ԳՊՀ-ի և Իրավաբանների հայկական ասոցիացիայի համագործակցությամբ իրականացվել է «Երիտասարդությունը հանուն հակակոռուպցիայի» նախագծի վերաբերյալ առցանց իրազեկման միջոցառում, որին մասնակցել են ԳՊՀ ուսանողները: Հանդիպման արդյունքում ԳՊՀ մի խումբ ուսանողներ, ցանկություն են հայտնել մասնակցել նախագծի շրջանակներում կազմակերպված դասընթացներին և ծրագրի ավարտին հանձնել են ստուգարք: Արդյունքների ամփոփումից հետո ընտրված առաջնորդները մասնակցել են նաև նախագծի խորացված փուլին՝ «Երիտասարդ առաջնորդների հակակոռուպցիոն դպրոցին», և կատարել են խմբային հետազոտական աշխատանքներ:

11. «Ակադեմիական ինքնավարությունը որակյալ կրթության գրավական» խորագրով առցանց աշխատաժողով- 2020 թ. հուլիսի 6-ին ԳՊՀ-ում «Ակադեմիական ինքնավարությունը որակյալ կրթության գրավական» ծրագրի շրջանակում տեղի է ունեցել առցանց աշխատաժողով, որին մասնակցել են ԳՊՀ աշխատակիցներ և ուսանողներ, ինչպես նաև «Կրթություն և գործունեություն» հիմնադրամի փորձագետներ: Հանդիպման ընթացքում ներկայացվել են մի խումբ ուսանողների և կրթության փորձագետների՝ ամիսներ տևած հետազոտական աշխատանքների արդյունքների մասին զեկուցումներ, որոնք մեկ ամիս անց ընդհանրացվել և հրապարակվել են առանձին գրքույկով:

12. «Դոկտորական կրթության քաղաքականությունն ու կառուցվածքները» թեմայով կարողությունների զարգացման վերապատրաստման դասընթաց- 2020 թ. հուլիսի 15-17-ը

«Դոկտորական կրթության բարեփոխումը Հայաստանում՝ ակադեմիական համայնքի, արդյունաբերության պահանջներին և ԵՄ փորձին համապատասխան» (ARMDOCT) ծրագրի շրջանակում կազմակերպված առցանց վերապատրաստումներին ԳՊՀ-ից մասնակցել է ԱԿՀ բաժնի մասնագետ Ս.Ալավերդյանը: Կարողությունների զարգացմանը միտված հեռավար վերապատրաստման նպատակն էր ուսումնասիրել ԵՄ-ում և մասնավորապես ARMDOCT ծրագրի գործընկեր երկրներում դոկտորական կրթության քաղաքականությունն ու գործառնությունը: Սեմինարների ընթացքում ներկայացվել են դոկտորական կրթության զարգացումները, զալցբուրգյան սկզբունքները, ինչպես նաև ARMDOCT ծրագրի գործընկերներ երկրների (Ֆրանսիա, Իտալիա, Լիտվա և Պորտուգալիա) լավագույն փորձը: Անդրադարձ է եղել նաև հետազոտությունների ռազմավարությանը, դոկտորական կրթության ֆինանսավորմանը և դոկտորական կրթության կազմակերպման մեջ գործարար ոլորտի ներգրավվածությանը:

13. USAID World Learning (*Համաշխարհային ուսուցում*) կազմակերպության հետ առցանց հանդիպում- 2020 թ. սեպտեմբերի 2-ին, համաձայն նախապես ձեռքբերված պայմանավորվածության, ԳՊՀ ԱԿՀ բաժինը առցանց ձևաչափով (**Microsoft Teams Meeting** հարթակով) հանդիպել է USAID World Learning-ի ամերիկացի ներկայացուցիչների հետ՝ միմյանց հետաքրքրությունները պարզելու և համագործակցության հնարավոր ուղիներ փնտրելու համար:

14. Էրազմուս+ BOOST (Հայաստանյան համալսարանների միջազգայնացման ռազմավարության և մարքեթինգի խթանում) ծրագրի ամփոփիչ «վիրտուալ» համաժողով- 2020 թ. հոկտեմբերի 12-ին **Էրազմուս+ BOOST** ծրագրի համակարգողի՝ Հայկական պետական մանկավարժական համալսարանի հրավերով ԳՊՀ-ից ԱԿՀ բաժնի ղեկավար Ն. Սաֆարյանը, բաժնի մասնագետ Ս. Ալավերդյանը և Օտար լեզուների ամբիոնի դասախոս Ն. Մեժլումյանը մասնակցել են ծրագրի ամփոփիչ «վիրտուալ» համաժողովին, որի ժամանակ խոսվել է ծրագրի ընթացքում բարձրագույն կրթության միջազգայնացմանն ուղղված որոշակի ձեռքբերումների, մասնավորապես՝ բարձրագույն կրթության հնգամյա ռազմավարության մշակման և դրա իրականացման գործողությունների ծրագրի, նորաստեղծ Study in Armenia էլեկտրոնային կայքի և այլնի մասին:

15. Թուրքադրբեջանաահաբեկչական կոալիցիայի սանձազերծած լայնամասշտաբ պատերազմի մասին իրականության բարձրաձայնման համար բուհերի անելիքների մշակմանը միտված առցանց հանդիպում- Էրազմուս+ ազգային գրասենյակի նախաձեռնությամբ հոկտեմբերի 7-ին առցանց հարթակում կայացած հանդիպմանը՝ նվիրված արցախա-ադրբեջանական շփման գծի ողջ երկայնքով և հայ–ադրբեջանական շփման գծի որոշ հատվածներում Ադրբեջանի սանձազերծած լայնամասշտաբ ռազմական գործողությունների խնդրին, ԳՊՀ-ից մասնակցել են ԱԿՀ բաժնի աշխատակիցները: Քննարկման արդյունքում ստեղծել է խումբ, որը աշխատել է խնդրի բարձրաձայնման համար միջազգային հարթակներին իրազեկող մեկ միասնական տեղեկատվական նամակի մշակման ուղղությամբ: Նամակը վերջնական տեսքի բերելուց հետո այն ուղարկվել է միջազգային գործընկերներին՝ համապարփակ տեղեկություն տրամադրելով հակառակորդի կողմից կրթամշակութային հաստատությունների և քաղաքացիական այլ ենթակառուցվածքների թիրախավորման մասին՝ ցույց տալով ադրբեջանաթուրքաահաբեկչական կոալիցիայի ցեղասպան գործելաոճն ու նպատակները:

16. «Կոռուպցիայի կանխարգելումը» թեմայով դասընթաց- Շվեդիայի կառավարության աջակցությամբ և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի գործընկերությամբ Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից իրականացվող «Երիտասարդությունը հանուն հակակոռուպցիայի» ծրագրի հիմնական և խորացված ուսուցումների շրջանավարտ, ԳՊՀ «Իրավագիտություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի Սահդա Օհանջանյանի ու ԳՊՀ ԱԿՀ բաժնի համատեղ ջանքերով 2020 թ. դեկտեմբերի 3-ին, 6-ին և 8-ին կազմակերպվել է առցանց դասընթացների շարք՝ նվիրված կոռուպցիայի սահմանմանը, դրսևորման ձևերին, կանխարգելմանը և հանրային ծառայողների գույքի, եկամուտների, շահերի ու ծախսերի հայտարարագրմանը: Դասընթացների նպատակն էր բարձրացնել երիտասարդության հակակոռուպցիոն ընկալման և գիտակցության մակարդակը:

17. «Հանրային կառավարումը ԵԱՏՄ երկրներում» միջազգային ֆորումը- 2020 թ. դեկտեմբերի 16-17-ը Ռուսաստանի Դաշնության Բելգորոդ քաղաքում առցանց ձևաչափով անցկացված «Հանրային կառավարումը ԵԱՏՄ երկրներում» միջազգային երկօրյա ֆորումին

հրավիրվել, ֆորումի աշխատանքներին մասնակցել և Գորիսի պետական համալսարանի անունից ողջույնի խոսքով հանդես է եկել ԳՊՀ պրոռեկտոր, բ.գ.թ., դոցենտ Թեհմինա Մարությանը՝ որպես ֆորումի գործընկեր: Միջոցառմանը մասնակցում էին ոլորտի առաջատար գիտնականներ ու փորձագետներ Ռուսաստանից, Բելառուսից, Ղազախստանից, Ղրղզստանից և Հայաստանից (Երևանի պետական համալսարան, Գորիսի պետական համալսարանը): Այն իրականացվել է «ԵԱՏՄ անդամ պետությունների հանրային կառավարման դպրոցների միջտարածաշրջանային ցանց» ծրագրի շրջանակներում: Կազմակերպիչը Բելգորոդի պետական ազգային համալսարանի սահմանային համագործակցության և ինտեգրացիայի ինստիտուտն էր:

18. Օտարերկրյա որակավորումների ճանաչման վերաբերյալ դասընթաց- 2020 թ. դեկտեմբերի 23-ին Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնի (ENIC Armenia) կազմակերպած դասընթացին՝ «Փախստականների որակավորումների ճանաչում. քաղաքականություն և պրակտիկա» թեմայով, ԳՊՀ-ից մասնակցել է ԱԿՀ բաժնի մասնագետ Ս. Ալավերդյանը: Հանդիպմանը անդրադարձ է արվել նաև «ՀՀ բուհերի կողմից իրականացվող օտարերկրյա որակավորումների և կարճաժամկետ ուսուցման/կրեդիտային շարժունության ճանաչում» հետազոտության արդյունքներին:

Կրթական ծրագրերի որակի բարձրացման համար էական նախապայման համարելով պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ և վարչական կազմի վերապատրաստման գործընթացը և հատկապես կարևորելով նրանց անգլերենի իմացության բարելավումը՝ ԱԿՀ բաժինը 2019 թվականի մայսից Օտար լեզուների ամբիոնի օգնությամբ ձեռնարկել և բարեհաջող իրականացրել էր բուհի պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ, վարչական կազմի աշխատակիցների համար անգլերենի պիլոտային դասընթաց: Եվ հաշվի առնելով մասնակիցների դրական արձագանքն ու դասընթացի առաջին փուլի արդյունքների գոհացուցիչ լինելը՝ բաժինը, համաձայն իր տարեկան գործողությունների պլանի, 2020 թ. փետրվարին մեկնարկել էր դասընթացի նոր փուլ՝ հավաքագրելով նոր մասնակիցներ և իրականացնելով նրանց խմբավորումը՝ ըստ իմացության մակարդակի: Սակայն նկատի ունենալով երկրում հայտարարված արտակարգ դրությունը, ինչպես նաև իրավիճակի հետևանքով աշխատակիցների ծանրաբեռնվածության ավելացումը և դասընթացավարի՝ Խաղաղության կորպուսի կամավորի հարկադրված մեկնումը հայրենիք՝ բաժինը նպատակահարմար է գտել անորոշ ժամկետով հետաձգել նախատեսված 7-շաբաթյա դասընթացը:

Շարժունության խթանում և կարողությունների զարգացմանը միտված ծրագրերի նախագծում ու իրականացում: ԱԿՀ բաժինը, գիտակցելով համալսարանի ներքին շահակիցների՝ միջազգային շարժունության ծրագրերին մասնակցության խնդրահարույց լինելը և շարժունության ծրագրերին մասնակցության աճ գրանցելու կարևորությունը, սեպտեմբեր ամսից սկսած ուսանողներին և աշխատակիցներին շարժունության հնարավորություններ ընձեռելու համար բազմաթիվ առաջարկներ է ուղարկել եվրոպական մի շարք համալսարաններ Էրազմուս+ ծրագրի շրջանակներում փոխանակման ծրագրեր իրականացնելու համար, սակայն մեծ մասամբ ստացել է բացասական արձագանք այն պատճառաբանությամբ, որ նրանք տարածաշրջանում արդեն իսկ ունեն գործընկերներ կամ առայժմ մտադրություն չունեն նոր համագործակցություն սկսել: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ նոր գործընկերներ ձեռք բերելու ուղղությամբ տարվող քայլերից ինչ-որ առումով նպաստավոր է եղել «Էրազմուս+ տեղեկատվական օրեր» միջոցառմանը բաժնի մասնակցությունը, քանի որ այդ հանդիպմանը ներկա են եղել նաև Իսպանիայի Էրազմուս+ ազգային գործակալությունից և իսպանական բարձրագույն ուսումնական տարբեր հաստատություններից: Երկօրյա միջոցառման ընթացքում արտերկրի համալսարանների ներկայացուցիչների հետ փոխշփումները հնարավորություն են ընձեռել անձամբ ծանոթանալ, տեղեկատվական նյութեր ու կոնտակտային տվյալներ փոխանակել և նախնական պայմանավորվածություններ ձեռք բերել հետագա համագործակցությունների համար: Կարևոր է արձանագրել, որ այդ հանդիպումներից հետո ձեռնարկված գործողությունների արդյունքում այս պահին իսպանական մի շարք համալսարաններ դրական են արձագանքել շարժունության ծրագրեր իրականացնելուն:

Բաժինը աշխատել է նաև ԳՊՀ-ում Էրազմուս+ կարողությունների զարգացման ծրագրերին դիմելու ուղղությամբ, ինչի արդյունքում հաշվետու ժամանակահատվածում համալսարանը

կոնսորցիումի անդամության և համագործակցության նոր առաջարկներ է ստացել: Կոնսորցիումի շրջանակում հաջողվել է դիմել դրամաշնորհային մրցույթին՝ իբրև գործընկեր կողմ հանդես գալով SU-AIDA, SAH, SMARTI, 3L4WORK, DISCOVER, CrIMS, INNOARM, TeachGREEN, NURTURE, ENA-RESTRICT նախագծերով: Սրանցից ENA-RESTRICT-ը մշակվել է LNSS ծրագրի գործընկեր համալսարանների նախաձեռնությամբ և հանդիսանում է LNSS-ի տրամաբանական շարունակությունն ու լրացումը: Դա վկայում այն մասին, որ ծրագիրը ունեցել է մեծ ազդեցություն և շոշափելի վերջնարդյունքներ, իսկ գործընկեր համալսարանները ձեռք են բերել փոխադարձ վստահություն և հուսալի գործընկերոջ համբավ: Նախկինում ձեռք բերված գործընկերային հարաբերությունների արդյունք պետք է համարել նաև SU-AIDA, SMARTI, SAH, 3L4WORK և INNOARM նախագիծ-առաջարկները, քանի որ նշվածներից առաջին երկուսը ԳՊՀ-ի և ՀՀ ՊԿԱ-ի, իսկ մնացյալը ՃՇՀԱՀ-ի հետ համագործակցությունների շրջանակում են մշակվել:

Էրազմուս+ ծրագրի 2014-2020թթ. շրջափուլի շրջանակներում **Կարողությունների զարգացման գործողության** վերջին առաջարկների մրցույթի արդյունքները ամփոփվել են 2020 թ. հուլիսին, և մրցույթում հաղթած ծրագրերից երկուսում՝ **"Support for Innovative Methodology, Approaches and Tools for Teaching through the Medium of English in order to improve Educational Field, Sustainability and Internationalization"**-ում **(SMARTI)** և **"Capacity Building in Sustainability for Architectural Heritage"** -ում **(SAH)**, ընդգրկվել է նաև Գորիսի պետական համալսարանը՝ որպես կոնսորցիումի անդամ:

SMARTI ծրագրի համակարգողը **Դրեզդենի տեխնիկական համալսարանն** է: Այն նպատակ ունի մշակել Բոլոնիայի չափանիշներին համահունչ թափանցիկ, ազգային և միջազգային կրթական չափորոշիչներ և դասավանդման ու ուսումնառության համադրելի գործիքներ, բարձրացնել ծրագրի գործընկեր երկրներում կրթության բովանդակության, անձնակազմի և ուսանողների մասնագիտական որակները վերապատրաստման ուսումնական կայուն ծրագրերի մշակման միջոցով, աջակցություն ցուցաբերել ԵՄ մասնակից և ծրագրի գործընկեր երկրների ուսումնական հաստատությունների միջազգայնացմանը, դասավանդողների և ուսանողների շարժունությանն ու փոխանակմանը: **Հայաստանում նախագիծը նպատակ ունի** նաև օգնել գործընկերներին համապատասխանել ՀՀ կառավարության կողմից սահմանված պահանջներին՝

– EMI (*Անգլերենը դասավանդման միջոց*) ծրագրերի ներդրմամբ բարձրացնել աշխատաշուկայում ուսանողների պահանջարկը,

– հայկական բարձրագույն կրթությունը դարձնել եվրոպական կրթական տարածաշրջանի (EHEA) համար ամբողջովին ճանաչելի,

– բարելավել կրթության որակը և մատչելիությունը EMI նորացված բովանդակության ու մեթոդների միջոցով՝ աջակցելով բուհերին և կրթության միջազգայնացմանը:

SAH ծրագրի համակարգողն է Լ'Աքվիլայի համալսարանը: Ծրագրի նպատակն է Ռուսաստանի Դաշնությունում, Հայաստանում և Իրանում թարմացնել և բարելավել ճարտարապետական ժառանգության (պատմական կառույցների ինֆորմացիոն մոդելավորում (BIM) և քաղաքային պատմական տարածություններ) կայունության ոլորտում ուսումնական պլանների որակը՝ համաշխարհային շուկայի կայուն զարգացման կարիքները բավարարելու համար: Ծրագրի ենթանպատակներն են՝

– ճարտարապետական ժառանգության կայունության համար միջառարկայական նոր մոդելի և ԵՄ լավագույն փորձին համապատասխան ճարտարապետական ինժեներության՝ գործնական ուղղվածություն ունեցող բակալավրիական ու մագիստրոսական կրթական ծրագրերի մշակում ու փորձարկում՝ շրջակա միջավայրի փոփոխությունների վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու և դրանց արձագանքելու նպատակով,

– կրթության, գիտության, արտադրության և իշխանությունների փոխգործակցության հարթակի ստեղծում՝ ճարտարապետական ինժեներության և վերականգնման ոլորտում կայուն հասարակության կարիքները բավարարող անձանց ժամանակակից մասնագիտական կարողությունների ձևավորման համար:

2020 թ. դեկտեմբերի 16-ին տեղի է ունեցել SAH ծրագրի մեկնարկային հանդիպումը: Առաջիկայում կմեկնարկի նաև SMARTI ծրագիրը:

ԳՊՀ պաշտոնական կայքէջում օտարալեզու տեղեկատվության ծավալի մեծացմանն ուղղված

միջոցառումներ: Հաշվի առնելով ՈԱԱԿ փորձագիտական խմբի վերհանած թերությունը՝ ԳՊՀ պատշոնական կայքէջի մի շարք բաժինների՝ օտար լեզվով հասանելի չլինելու մասին՝ դիտարկվող ժամանակահատվածում բաժինը քայլեր է ձեռնարկել խնդրի վերացման ուղղությամբ: Այս պահին կայքէջի գրեթե բոլոր բաժինները հասանելի են երեք լեզվով (հայերեն, անգլերեն, ռուսերեն): Կարևոր է ընդգծել, որ համալսարանի գործունեության և այլ միջոցառումների մասին օտարալեզու տեղեկության տարածման նպատակով բաժինը ակտիվորեն համագործակցել է ինչպես ԳՊՀ հանրային կապերի և լրատվության բաժնի, այնպես էլ ԳՊՀ «Ագլերեն լեզու և գրականություն» մասնագիտության ուսանողների և Օտար լեզուների ամբիոնի դասախոս, ռուսերենի մասնագետ Լարիսա Իվանյանի հետ:

ԳՊՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման համար անհրաժեշտ նյութերի պատրաստում և թարգմանություն: ԱԿՀ բաժինը սեպտեմբեր-մարտ ամսիներին աշխատել է ԳՊՀ-ի վերահավատարմագրման համար անհրաժեշտ փաստաթղթերի մշակման ուղղությամբ: Մասնավորապես՝ սեպտեմբեր ամսվա ընթացքում պատրաստել և տրամադրել է էլեկտրոնային հարցաշարի լրացման համար 9-րդ բաժնում պահանջված փաստաթղթերը, հոկտեմբերին ներկայացրել է ինքնավերլուծության զեկույցի արտաքին կապերին և համագործակցությանն անչվող մասի նախնական տարբերակը, որը մի քանի անգամ խմբագրվել և վերջնական տեսքի է բերվել մարտին, իսկ դեկտեմբեր-մարտ ամիսներին աշխատել է Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնին ԳՊՀ-ի կողմից ներկայացվելիք փաստաթղթերի թարգմանության ուղղությամբ:

ԱԿՀ բաժնի ղեկավար՝ Նաիրա Սաֆարյան

23.12.2020